ԲՈՒՆԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆ

Bookmark

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Ս 640

Սնայդեր Թիմոթի
Ս 640 Բռնապետության մասին: Քսան դաս XX դարից / Թ. Սնայդեր; Թարգմանությունն անգլերենից՝ Հովհաննես Նիկողոսյանի.- Եր.: Newmag, 2023.- 136 էջ:

Գիրքը ներկայացնում է 20-րդ դարի պատմության ամենամութ էջերը՝ նացիզմից մինչև կոմունիզմ: 20 դաս, թե ինչպես է պետք դիմակայել ժամանակակից ավտորիտարիզմին: 20-րդ դարի 20 դասերը նախազգուշացնում են, որ մերօրյա խորհրդանիշները կարող են ազդել վաղվա օրվա վրա, հիշեցնում, որ պետք է ինքնուրույն մտածել ու առավելագույն չափով ուսումնասիրել ամեն ինչ, հարկ է արտահայտել սեփական մտքերը, ոչ թե տրաֆարետային արտահայտությունները:

Պատկերազարդ գրքում Նորա Կրուգն իր յուրահատուկ ոճով նոր շունչ, գույն և ուժ է հաղորդել Սնայդերի պատմություններին՝ դրանք վերածելով տպավորիչ մտորումների: Վնորոշության և անկայունության ժամանակաշրջանում, «Բռնապետության մասին» այս հրատարակությունը հորդորում է լինել ակտիվ, գիտակից անհատ ու հիմնավոր որոշումներ կայացնել:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-884-96-7
Թիմոթի Սնայդեր «Բռնապետության մասին» © 2023, «Նյու Մեգ» ՍՊԸ
On Tyranny © 2021 Timothy Snyder
Illustrations © 2021 Nora Krug

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել Curtis Brown ընկերության և հեղինակների հետ կնքած պայմանագրերով:

Քաղաքականության մեջ խաբվեցիր՝ արդարացում չունես:

— ԼԵՇԵԿ ԿՈԼԶԿՈՎՍԿԻ

BookOnline



Թիմոթի Սնայդեր

ԲՈՆԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՔՍԱՆ ԴԱՍ XX ԴԱՐԻՑ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Նկարազարդումը՝ Նորա Կրուգի

Թարգմանությունն անգլերենից՝
Հովհաննես Նիկողոսյանի

ԵՐԵՎԱՆ
2023

BookMan

1.

Կանխավ մի՛ ենթարկվիր

10

2.

Պաշտպանի՛ր հանրային ինստիտուտները

15

3.

Զգուշացի՛ր միակուսակցական պետությունից

19

4.

Պատասխանատո՛ւ եղիր աշխարհի համար

26

5.

Մասնագիտական էթիկան մի՛ խախտիր

33

6.

Զգուշացի՛ր ռազմականացված կառույցներից

36

7.

Զինվե՞լ ես՝ լա՛վ մտածիր

41

8.

Դիմադրի՛ր

45

9.

Հետևի՛ր խոսքիդ

53

10.

Հավատա՛ ճշմարտությանը

58

Bookmark

11.
Հետազոտի՛ր
66

12.
Նայի՛ր դիմացինիդ աչքերի մեջ
ու զրուցի՛ր հարգանքով
75

13.
Զբաղվի՛ր իրական խնդիրներով
77

14.
Գծի՛ր քո անձնական
կյանքի սահմանները
81

15.
Միացի՛ր բարի գործերին
86

16.
Սովորի՛ր այլուր ապրող քեզ
պես մարդկանցից
89

17.
Հետևի՛ր վտանգավոր
բառերին
93

18.
Շրջադարձային պահերին
մի՛ կորցրու քեզ
96

19.
Սիրի՛ր հայրենիքդ
105

20.
Հնարավորին չափ խիզա՛խ եղիր
109

ՎԵՐՋԱԲԱՆ 111 ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ 124 ՀԵՂԻՆԱԿԻ ԵՎ ՆԿԱՐԱԶԱՐԴՈՂԻ ՄԱՍԻՆ 129

Bookmark

ՆԱԽԱԲԱՆ

Պատմությունը չի կրկնվում, բայց դասեր տալիս է: Երբ ԱՄՆ հիմնադիր հայրերը քննարկում էին սահմանադրությունը, նրանք փորձում էին դասեր քաղել այն պատմությունից, որը գիտեին: Նրանց մտահոգում էր, որ իրենց պատկերացրած դեմոկրատիան կարող է փլուզվել, ուստի քննում էին, թե անտիկ շրջանի ժողովրդավարություններն ու հանրապետություններն ինչու անկում ապրեցին և վերածվեցին օլիգարխիկ ու կայսերական համակարգերի: Արիստոտելը զգուշացնում էր, որ անհավասարությունն անկայունության է հանգեցնում, Պլատոնն էլ համարում էր, որ դեմագոգները խոսքի ազատությունը չարաշահելով են դառնում բռնապետ: Հիմնելով օրենքի իշխանությամբ և հակակշիռների ու զսպումների համակարգով օժտված դեմոկրատական հանրապետություն՝ հիմնադիր հայրերը փորձում էին խուսափել մի չարիքից, որն անտիկ շրջանի փիլիսոփաների պես կոչում էին տիրանիա: Նրանք նկատի ունեին անհատի կամ խմբի իշխանազավթումը կամ էլ օրենքների շրջանցումը՝ հանուն իշխանավորի շահի: Հետագայում ԱՄՆ-ում ծավալված քաղաքական բանավեճը վերաբերում էր ամերիկյան հասարակության ներսում եղած բռնակալությանը, օրինակ՝ ստրուկների ու կանանց հանդեպ:

Եթե մենք այսօր մտահոգ ենք, որ ամերիկյան մոդելը կարող է բռնակալության վերածվել, կարող ենք մեր հիմնադիր հայրերի պես խորհրդածել այլ ժողովրդավարությունների և հանրապետությունների պատմության մասին: Լավ լուրն այն է, որ մենք ունենք ավելի թարմ ու ավելի վերաբերելի օրինակներ, և հարկ չկա վերադառնալու անտիկ շրջանի Աթենք կամ Հռոմ: Վատ լուրն այն է, որ ժամանակակից ժողովրդավարությունների պատմությունը ևս կերտվում է տապալումներով ու անկումներով: Այն պահից ի վեր, երբ ամերիկյան գաղութներն անկախացան բրիտանական միապետությունից, որը հիմնադիր հայրերը, ի դեպ, կոչում էին բռնակալական, եվրոպական պատմության մեջ եղել է դեմոկրատական երեք վերելք. մեկը՝ Առաջին աշխարհամարտից հետո (1918), մյուսը՝ Երկրորդ աշխարհամարտից հետո (1945), երրորդը՝ կոմունիզմի տապալումից հետո (1989): Այս շրջափուլերում հռչակված ժողովրդավարություն-

ների տապալման հանգամանքները որոշ առումով հիշեցնում են մեր սեփական անկումը: Պատմությունը կարող է սովորեցնել: Այն նաև կարող է նախազգուշացնել: 19-րդ դարավերջին, դրանից մեկ դար անց էլ համաշխարհային առևտրի ընդլայնումը ստեղծել էր առաջընթացի ակնկալիքներ: 20-րդ դարի սկզբին, դրանից մեկ դար անց էլ այս հույսերը հարցականի տակ դրվեցին զանգվածների քաղաքականության մասին նոր պատկերացումների պատճառով, քանի որ նորահայտ առաջնորդները կամ կուսակցությունները պնդում էին, թե ուղղակիորեն ներկայացնում են ժողովրդի կամքը: 1920-30-ականներին եվրոպական պետությունների ժողովրդավարական համակարգը մխրճվեց աջ ավտորիտարիզմի ու ֆաշիզմի մեջ: Խորհրդային Միությունում 1922 թվականին հաստատված կոմունիստական ռեժիմն այդ մոդելը 1940-ականներին արտահանեց Եվրոպա: 20-րդ դարի եվրոպական պատմությունը ցույց է տալիս, որ հասարակությունները կարող են կոտրվել, ժողովրդավարությունը կարող է ընկրկել, էթիկան կարող է անկում ապրել, շարքային մարդն էլ զենքը ձեռքին, կարող է հայտնվել գերեզմանափոսի եզրին: Ինչո՞ւ: Այս հարցի պատասխանն ստանալը է բխումբոլորիս շահերից:

Թե՛ ֆաշիզմը և թե՛ կոմունիզմը գլոբալացման արձագանքն էին: Ֆաշիստները մերժում էին բանական միտքը՝ հանուն կամքի, հերքում էին օբյեկտիվ ճշմարտությունը՝ հանուն ինչ-որ միֆի: Այն հորինել էին առաջնորդները, որոնք պնդում էին, թե դարձել են ժողովրդի ձայնը: Նրանք շատ պարզ տերմիններով էին բացատրում գլոբալացումը՝ պնդելով, թե դրանից բխող բարդ խնդիրներն ազգի դեմ դավադրության հետևանք են: Ֆաշիստները մեկ-երկու տասնամյակ ղեկավարեցին՝ թողնելով մի մտավոր ժառանգություն, որն օրեցօր դառնում է ավելի արդիական: ԽՍՀՄ-ում կոմունիստների կառավարումը ձգվեց յոթ տասնամյակ, Արևելյան Եվրոպայում՝ չորս տասնամյակ: Երկրի ղեկը կուսակցական վերնախավի ձեռքին էր, որն ուներ գաղափարական մենաշնորհ:

Գայթակղիչ է մտածելը, որ մեր ժողովրդավարական ժառանգությունը մեզ կպաշտպանի նման սպառնալիքներից: Սա թյուր կարծիք է: Ամերիկացիներն այսօր ավելի իմաստուն չեն, քան այն եվրոպացիները, որոնք 20-րդ դարում տեսնում էին, թե ժողովրդավարությունն ինչպես է տանուլ տալիս ֆաշիզմին, նացիզմին և կոմունիզմին: Մեր առավելությունն այն է, որ կարող ենք սովորել նրանց սխալների հիման վրա:

1.

Կանխավ մի՛ ենթարկվիր

Ավտորիտար իշխանությունը հիմնականում ձևավորում է առանց ժողովրդի ընդդիմանալու: Այդպիսի ժամանակներում մարդիկ գլխի են ընկնում, թե ավելի ռեպրեսիվ իշխանությունն ապագայում ինչ է ցանկանալու և առաջարկում են իրենց ծառայությունները՝ մինչև նույնիսկ նրանց խնդրելը: Այդպես համակերպվող համաքաղաքացին իրականում իշխանությանը սովորեցնում է, թե ինչ կարելի է անել իր հետ:

Վաղաժամ հնազանդությունը քաղաքական ողբերգություն է: Գուցե ղեկավարողներն ի սկզբանե չգիտեին էլ, որ քաղաքացիները պատրաստ կլինեն հետ կանգնել իրենց որոշ արժեքներից կամ սկզբունքներից: Գուցե նոր ռեժիմը սկզբնական փուլում չուներ էլ որոշակի առումով մարդկանց վրա ազդելու ուղղակի միջոցներ: Գերմանիայում ընտրություններից հետո (1932), որոնք կառավարություն ձևավորելու հնարավորություն տվեցին Ադոլֆ Հիտլերին, կամ էլ Չեխոսլովակիայում կոմունիստների հաղթանակով ավարտված ընտրություններից հետո (1946) հաջորդ կարևորագույն փուլը մարդկանց վաղաժամ հնազանդվելն էր: Երկու դեպքում էլ բավարար թվով մարդիկ իրենց ծառայությունները կամովին առաջարկեցին նոր իշխանություններին, ուստի թե՛ նացիստները, թե՛ կոմունիստները հասկացան, որ կարող են ավելի արագ իրականացնել ամբողջական իշխանափոխության իրենց ծրագրերը: Կոնֆորմիզմից բխած առաջին չմտածված քայլերից հետո այլևս հնարավոր չէր լինելու հետ շրջել պատմությունը:

Ադոլֆ Հիտլերը 1938-ի սկզբին լիարժեք վերահսկում էր իշխանությունը Գերմանիայում և սպառնում էր բռնակցել հարևան Ավստրիան: Երբ Ավստրիայի կանցլերն ընկրկեց, ավստրիացիների վաղաժամ հնազանդումը կանխորոշեց այդ երկրի հրեաների ճակատագիրը: Տեղի նացիստները բռնեցին հրեաներին ու ստիպեցին փողոցներից ջնջել Ավստրիայի անկախության բոլոր խորհրդանիշները:

Կարևոր է, որ ոչ նացիստներն այդ ամենին հետևում էին հետաքրքրությամբ ու հրճվանքով:

Նացիստները, որոնք ցուցակագրել էին հրեաների ունեցվածքը, գողացան, ինչ կարող էին: Ոչ նացիստները նույնպես միացան այդ կողոպուտին: Քաղաքական մտքի տեսաբան Հաննա Արենդտը վերհիշում է. «Երբ գերմանացի զինվորները ներխուժեցին երկիր, ոչ հրեա հարևանները սկսեցին հարձակվել հրեաների տների վրա, ավստրիացի հրեաներն էլ սկսեցին ինքնասպանություն գործել»:

1938-ի մարտին ավստրիացիների վաղաժամ հնազանդությունը նացիստների բարձր ղեկավարությանը հստակորեն ցույց տվեց, թե արդեն ինչն է հնարավոր: Նույն թվականի օգոստոսին Վիեննայում Ադոլֆ Այքմանը ստեղծեց Հրեաների գաղթի կենտրոնական գրասենյակը: Հետևելով ավստրիացի նացիստների՝ մարտ ամսվա օրինակին՝ Գերմանիայի նացիստները 1938-ի նոյեմբերին կազմակերպեցին հրեաների կոտորած, որը պատմության մեջ հայտնի է որպես «Բյուրեղապակյա գիշեր»:

1941 թվականին, երբ Գերմանիան ներխուժեց Խորհրդային Միություն, նացիստական ռազմականացված կազմակերպությունը*, առանց վերևից հրամանների, սկսեց մշակել զանգվածային սպանությունների մեթոդները: Նրանք ուղղակի գուշակեցին, թե ինչ կցանկանային իրենց ղեկավարները, ու ցույց տվեցին, թե ինչն էր հնարավոր:

Դա ավելին էր,
քան Հիտլերը կարող էր երազել:

* SS (գերմ.՝ Schutzstaffeln - պահնորդական ջոկատներ, կրՀատ ձևը, խորհրդանշանը ռուսերեն), արտոնյալ ռազմականացված կազմակերպություն ֆաշիստական Գերմանիայում (Բոլոր ծանոթագրությունները՝ newmag-ի):

Սկզբում վաղաժամ հնազանդությունը նշանակում է բնազդաբար, առանց խորը մտածելու հարմարվել նոր իրավիճակին: Միայն գերմանացիների՞ն է բնորոշ այս ամենը:

Եյլի համալսարանի հոգեբան Սթենլի Միլգրեմը, խորհելով նացիստական վայրագությունների մասին, ցանկացել էր ցույց տալ, որ գոյություն ունի հատուկ ավտորիտար ինքնություն, որն ունակ է բացատրելու, թե ինչու գերմանացիներն ինքնադրսևորվեցին հենց այդ կերպ: Նա մի գիտափորձ մշակեց, որպեսզի փորձարկի իր ենթադրությունը, բայց չկարողացավ դրա թույլտվությունը ստանալ Գերմանիայում, ուստի նախաձեռնեց Եյլի համալսարանական շենքում 1961 թվականին: Ժամանակային առումով դա համընկավ Երուսաղեմում Ադոլֆ Այքմանի դատավարության հետ, որին դատում էին Հոլոքոստում իր դերակատարման համար:



Միլգրամն իր գիտափորձի մասնակիցներին (Եյլի ուսանողներ էին, Նյու Հեյվընի բնակիչներ) ասել էր, որ նրանք պետք է էլեկտրահարեն այլ մասնակիցների, և որ գիտափորձը նոր բաներ սովորելու մասին է:

Իրականում, պատուհանի մյուս կողմում նստած, լարերին միացված մարդիկ տեղյակ էին Միլգրեմի գիտափորձի մասին և պարզապես ձևացնում էին, թե էլեկտրահարվում են:

Երբ սուբյեկտները (կարծում էին, թե) էլեկտրահարում են (իրենց կարծիքով) գիտափորձի մասնակիցներին, նրանց աչքի առաջ զարգանում էր սարսափելի տեսարան: Մարդիկ, որոնց չէին ճանաչում և որոնց դեմ բողոք չունեին, լուրջ տառապանքների էին ենթարկվում՝ խփելով ապակուն ու բողոքելով սրտի շրջանում ցավերից: Նույնիսկ այդ պարագայում գիտափորձի սուբյեկտներից շատերը հետևում էին Միլգրեմի ցուցումներին ու ավելի մեծ լարմամբ (իրենց կարծիքով) էլեկտրահարումները շարունակում էին այնքան, մինչև զոհերն առերևույթ մահանում էին: Նույնիսկ նրանք, ովքեր այդ պրոցեսը չշարունակեցին մինչև իրենց նման մարդկանց (առերևույթ) սպանությունը, գիտափորձի վայրից հեռացան առանց հետաքրքրվելու մյուս մասնակիցների առողջության մասին:



Միլգրեմը հասկացավ, որ մարդիկ զարմանալիորեն ընկալունակ են նոր իրավիճակներում թելադրվող նոր կանոնների հանդեպ: Նրանք զարմանալիորեն պատրաստ են վնասել և սպանել ուրիշներին՝ հանուն ինչ-որ նոր նպատակի, եթե նոր իշխանությունը հրահանգի: «Հնազանդումն այնքան ցցուն էր,– ավելի ուշ հիշում էր Միլգրեմը, – որ իմաստ չուներ նույն գիտափորձը կրկնել Գերմանիայում»:

2.

Պաշտպանի՛ր հանրային ինստիտուտները

Ինստիտուտներն օգնում են պարկեշտ լինել: Բայց դրանք մեր օգնության կարիքն ունեն: Մի՛ խոսեք «մեր ինստիտուտների» մասին, քանի դեռ դրանք չեք դարձրել իրոք ձերը: Ինստիտուտները չեն կարող պաշտպանվել. հերթով կկործանվեն, եթե յուրաքանչյուրն ի սկզբանե պաշտպանված չէ: Ընտրի՛ր որևէ ինստիտուտ, որը քեզ համար կարևոր է (դատարան, մամուլ, օրենք, արիմիություն), և կանգնի՛ր կողքին: